

յարակցեալք են լերինք հարաւայնոյն Ասիոյ Փոքրո, այլ բազումս ունին կտրուածս, կածանս նրբուղիս, թէպէտ եւ անձուկս եւ դժոխածէ, այլ սակայն ոչ անանցս. եւ ընդ այսոսիկ՝ բազում անգամ, եւ երբեմն նաեւ ընդ կոհակս բարձանցն՝ խուժեցին երկուստեք թշնամիքն 'ի սահմանս իրերաց: Որպէս եւ յայսմ յիշեալ նուագի, կամ 'ի շփոթութեան կարծելով զՀայս՝ վասն մահուան Ռուբինի եւ յաջորդին ընտրութեան, կամ յուսագնեալ 'ի յաղթանակս խրոխտագոյն ախոյենին քրիստոնէից՝ Սալահէտտին, որ յանհնարին տագնապի կացուցանէր զսոսա յայնմ ժամանակի յԱսորիս եւ 'ի Պաղեստին, **Ռոստոմ** ոմն գլխաւոր Թուրքաց, 'ի նոյնօրինակ վտանգ՝ թերեւս եւ 'ի սպառ 'ի ծառայութիւն կամելով արկանել զՀայս, մեծաւ, եւ (ըստ պատմչին) անթիւ եւ անհամար բազմութեամբ հրոսու Թուրքմանաց՝ կոխեաց եմուտ յեղակարծումն 'ի սահմանս Հայոց, եւ վաղվաղ յառաջեալ բանակեցաւ յանդիման նորոյ իշխանանիստ քաղաքին Սսոյ, յանուանեալ տեղին կամ 'ի դաշտն Ռաւին¹¹: Ոմանց՝ ինքնագլուխ ոմն եւ բաղդախնդիր թուեցաւ այրս այս. այլոց՝ մի 'ի զօրապետաց կամ յորդոց սուլտանին Իկոնիոյ. զի եւ չէր մարթ սոսկականի ումեք այնքան գումարտակս կազմել յերկրի հզօր աշխարհակալ սուլտանի, եւ առանց նորին հաւանութեան կոխել անցանել ընդ սահմանս:



Թերեւս անհրահանգ՝ սակայն ահաւոր էր բազմութիւնն. ահաւորագոյն եւս յանկարծահաս ճապաղումն. որ զի ոչ ներէր Լեւոնի՝ այն ինչ իշխանութիւն հասելոյ՝ զօրաժողով լինել ըստ ժամուն պիտոյից, հարկ առնէր անհնարին իմն երագութեան եւ անսովոր արիութեան, եթէ վանել կամէր զոսոխն եւ զհրոսակս նորին: Զերկոսին եւս 'ի վար էարկ

¹¹ Տես զանձանօթ տեղւոյս եւ 'ի Տեղագրութեանս, յէջ 214: